

մարեցանք գրելու առթիւս, վերջ տալ ուզելով հնա-
գիտաց տեղի և անտեղի մեկնութեանց և բացա-
տրութեանց Քրոնմ անուան վերայ: Այլ մեք դառ-
նամք խօսելու մի ուրիշ անուան վերայ. որ ըստ
մեր կարծեաց, բոլորովին հայկական ունի տիպար,
և որոյ ստուգարանութիւն ևս ցայսօր անյայտ է,
այն է կաւա:

Ը

ԿԱՒԱ. (ԿԱՖԱ-ՔԷՖԷ) ԱՆՈՒՆԸ

Թէողոսիոյ պատմութեանս ընթացքին մէջ ընդ-
հանրապէս՝ և « Հայկագունք ի Տաւրիա » գլխոյն
մէջ մասնաւորապէս աշխատեցանք ցուցնելու, որ
Հայք Ժ դարէ սկսեալ տաւրիական թերակղզւոյն
մէջ բնակութիւն հաստատել են. ճիշդ Ժ դարուն
մէջ առաջին անգամ կը լսուի ի պատմութեան
կաւա (Capha) անունը: Հնախօսից ամենայն ջանք
ի զուր ելած են, այս անուան ծագման կամ ստու-
գարանութեան մասին: Ոմանք տաճիկ քեաֆիր կամ
կեառռըր բառերուն համառօտութիւնը կը համարին
Քէֆէ տաճկահնչիւն անունը. և ապա առ մեզ,
տառադարձութեան կանոնով, ի կաֆա փոխուած.
այւք՝ քեֆ (հաճոյք)բառէն ածանցեալ կը համարին:
Մեզ՝ այսերկու մեկնութիւնք ևս անտեղի կ'երևան.
և փոխանակ ի տաճկերենէ ի հայ տառադարձելու
այդ անունը, այնպէս կ'ենթադրեմք, որ տաճիկք,

1. De administrando imperio. Կոստ. Պերիեռու-
ժենի: